

դիմեն աչաց բժշկութեան համար (P. G. M. 87-3596): ժողովուրդը մեծ հաւատք ունէր այդ ջուրերու մասին, այնպէս որ Տնօրինական Ս. Տեղերը այցելող ուխտաւորներ երբեք զանց չէին ընել Սելովամը: Ինչպէս որ Ս. Տեղերու վրայ կանուխէն եկեղեցիներ շինուեցան, հոս ալ հին դարերու մէջ կառուցուած կը տեսնուի հոյակապ եկեղեցի մը որուն կամարներուն տակ կը պայծառանար Սելովամի աւազանը:

Հայերն ալ շատ հին ժամանակներէ սոյն տեղւոյն մօտ շինած էին վանքեր և եկեղեցիներ որ կը յիշուին յանուանէ. անոնց պատմութիւնը և նկարագրութիւնը տեսնել Հ. Վ. Ե. (էջ 121-128):

18. Ակերդամա կամ ձառնեք. — Սիոնի լեռնէն իջնելով դէպի հարաւ, և ձորէն անցնելով արեւելք կը դառնանք, աղբիւսաց դրան դիմաց կը գտնուի Ակեղ-դաման կամ ձառնեքը որ ագարակ մըն է կամ արտ մը ուր կը թաղէին օտարները, ինչպէս կը գրէ աւետարանիչը (Մատթ. Ի. 1-10): Կ'ըսուի թէ Հեղինէ դշխոն պատերով շրջապատել տուաւ զայն տան մը ձեով (երկայնութիւն 164 եւ լայնութիւն 48 քայլ): Վերի կողմէն ունի լուսամուտ մը՝ ուրկէ կ'իջեցնեն ննջեցեալներու մարմինը. այս տեղը Հայոց սեպհականութիւնն է և տարուէ տարի տուրքը կը վճարուի հայոց վանքին կողմէ: Նորոգութիւնները հայեր կատարած են եւ ոչ ոք իրաւունք ունի հոն ննջեցեալ թաղելու (Հան. էջ 251-252):

Դ. դարէն սկսեալ, վկայութիւններու համաձայն, նոյն դաշտը վերի հին քաղաքի բլուրին դիմացն էր, հարաւային կողմը Benhinnomի հովտին որ կը ծառայէ իբր դերեզման օտարականներու: Սաչակիրներու ժա-